ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Պ-753
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

քաղ. Երևան 13 հունվարի 2025 թ.

Հայաստանի Հանրապետության ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմինը՝ ի դեմս նախարար ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻ, որը գործում է Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, և «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ տնտեսավարող սուբյեկտը (այսուհետ՝ ընդերքօգտագործող), ի դեմս տնօրեն ԷԴՈՒԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) և այլ իրավական ակտերով, համապատասխանաբար նախարարության և տնտեսավարող սուբյեկտի կանոնադրություններով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերը, տրամադրվող հանքավայրի շահագործման նախագիծը, կնքեցին սույն ընդերքօգտագործման N Պ-753 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պայմանագիրը նախատեսում է հանքավայրը շահագործման տրամադրելու պայմանները և ժամկետները, լեռնահատկացման կոորդինատները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, վճարների (բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների իրականացման վճարների, բնապահպանական հարկի) վճարման վերաբերյալ դրույթները, բնապահպանական կառավարման և ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար պահանջվող ֆինանսական երաշխիքի կատարման պահանջը ներկայացնելու դրույթը, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման (զգուշացման, հրաժարման, փոփոխության) դրույթները՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ, հանքի փակման հետ կապված դրույթները, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունները կարգավորող այլ պայմաններ:

1.2 Պայմանագիրը բաղկացած է հիմնական տեքստից և NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

1.3 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, այդ թվում՝ կողմերի այլ իրավունքները կարգավորվում են օրենսգրքով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

2. Պայմանագրի առարկան

2.1 Պայմանագրով՝ լիազոր մարմինն ընդերքօգտագործողին տարեկան 120000մ^3 մարվող պաշարներ, 2-C1 բլոկից ստատիկ պաշարները կազմում են 20545մ^3, դինամիկ պաշարներ առկա չեն, իսկ 1-C1 և 4-C1 բլոկներից համատեղ մարվելու է տարեկան 99455մ^3 (7 տարվա ընթացքում մարվելու են ստատիկ պաշարները, որից հետո դինամիկ) օգտակար հանածոյի պաշարների

(հանքավայրի անվանումը)

հաշվեկշռային պաշարները օգտագործման ամբողջ ժամկետի համար 2400.0 հազ.մ^3 մարվող պաշարներ, այդ թվում ստատիկ մարվող պաշարները 1-C1 և 4-C1 բլոկներից համատեղ՝ 695200մ^3 և 2-C1 բլոկից՝ 410900մ^3, իսկ դինամիկ պաշարները 1-C1 և 4-C1 բլոկներից համատեղ կազմում են 1293900մ^3 մարվող պաշար ըստ C_1 կարգի-

(հիմնական և ուղեկից օգտակար հանածոների քանակները՝ ըստ կարգերի)

որոնք հատակագծի վրա և ըստ խորության (հավելված) սահմանափակվում են հետևյալ կոորդինատներով՝ I բացահանք /բլոկ 2-C1/ 1.X=4407761.1784 Y=8469968.1643, 2.X=4407478.0000 Y=8470473.0000, 3.X=4406861.9632 Y=8470917.1645, 4.X=4406877.7269 Y=8470882.8635, 5.X=4406937.3807 Y=8470786.7682, 6.X=4406951.6496 Y=8470757.9098, 7.X=4406981.9129 Y=8470684.9376, 8.X=4407017.2918 Y=8470606.6287, 9.X=4407071.8705 Y=8470464.0867, 10.X=4407087.6385 Y=8470414.8632, 11.X=4407102.4508 Y=8470387.5086, 12.X=4407126.6370 Y=8470357.1745, 13.X=4407162.1684 Y=8470325.6936 14.X=4407202.6226 Y=8470297.1605, 15.X=4407423.2932 Y=8470153.2331, 16.X=4407532.5116 Y=8470091.1625, 17.X=4407669.0422 Y=8470028.1142 (սահմանափակված տարածքի մակերեսը՝ 22.4 հա), (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) և II բացահանք /1-C1 և 4-C1 բլոկներ/ 1.X=4407669.4363 Y=8469845.9098, 2.X=4407791.0000 Y=8469915.0000, 3.X=4407773.3683 Y=8469946.4328, 4.X=4407663.2074 Y=8470019.9598, 5.X=4407550.3405 Y=8470071.0451, 6.X=4407450.7910 Y=8470124.9622, 7.X=4407304.9385 Y=8470218.1553, 8.X=4407165.6441 Y=8470310.6269, 9.X=4407123.5414 Y=8470345.9611, 10.X=4407101.1779 Y=8470372.0664, 11.X=4407090.8843 Y=8470386.8746, 12.X=4407078.4121 Y=8470410.9704, 13.X=4407016.0109 Y=8470581.7262, 14.X=4406962.2493 Y=8470705.0004, 15.X=4406932.4571 Y=8470774.5062, 16.X=4406878.9071 Y=8470860.0168, 17.X=4406845.8649 Y=8470928.7960, 18.X=4406840.0000 Y=8470933.0000, 19.X=4406773.0000 Y=8471047.0000, 20.X=4406749.0000 Y=8471239.0000, 21.X=4406782.0000 Y=8471385.0000, 22.X=4406791.0000 Y=8471516.0000, 23.X=4406767.0000 Y=8471593.0000, 24.X=4406556.0000 Y=8471972.0000, 25.X=4406496.0000 Y=8472109.0000, 26.X=4406416.3330 Y=8472074.3971, 27.X=4406480.7756 Y=8472004.0060, 28.X=4406560.2535 Y=8471892.9414, 29.X=4406636.1668 Y=8471786.5868, 30.X=4406659.8245 Y=8471741.9937, 31.X=4406675.4676 Y=8471670.7600, 32.X=4406681.9739 Y=8471503.3089, 33.X=4406669.8251 Y=8471332.7424, 34.X=4406647.6239 Y=8471272.2882, 35.X=4406551.8265 Y=8471123.4141, 36.X=4406524.0349 Y=8470956.8457, 37.X=4406537.8295 Y=8470878.0092, 38.X=4406587.6494 Y=8470783.9098, 39.X=4406618.4381 Y=8470667.4072, 40.X=4406708.4365 Y=8470523.0602, 41.X=4406704.0303 Y=8470497.2856, 42.X=4406742.9990 Y=8470446.5008, 43.X=4406780.5085 Y=8470425.7572, 44.X=4406900.9598 Y=8470304.2108, 45.X=4407059.3742 Y=8470275.5408, 46.X=4407150.3876 Y=8470222.3346, 47.X=4407273.2006 Y=8470178.1519, 48.X=4407450.6233 Y=8470090.3673, 49.X=4407531.2814 Y=8470040.5145, 50.X=4407569.4082 Y=8470009.0265, 51.X=4407636.2837 Y=8469934.0000 (սահմանափակված տարածքի մակերեսը՝ 38.62 հա), (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով),

ավազակոպճային խառնուրդ

(հիմնական և ուղեկից բաղադրիչների պարունակությունը %, գ/տ և այլն)
Ավազ՝ 59,82% կոպիճինը՝ 40.18% միջին ելքով

(օգտակար հանածոյի պաշարների տեսակները, օգտակար հանածոյի լեռնային զանգվածից հանքարտադրատեսակի ելքը)

Լեռնահատկացման սահմանները հատակագծի վրա և ըստ խորության (հավելված)՝ համաձայն լեռնահատկացման ակտի L-753:
(ակտի համարը)

Պայմանագրի N 1 հավելվածում նշվում են ընդերքօգտագործողի ֆինանսական առաջարկները և նրա կողմից վճարվող ընդերքօգտագործման վճարները, պայմանագրի N 2 հավելվածով՝ հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորությունները, պայմանագրի N 3 հավելվածով՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները, պայմանագրի N 4 հավելվածով՝ բնապահպանական կառավարման պլանը, իսկ N 5 հավելվածով՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման
և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ:

Պայմանագիրը, ըստ անհրաժեշտության, կարող է ունենալ նաև այլ հավելվածներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման և հումքի վերամշակման աշխատանքների ժամկետները, ըստ փուլերի, իսկ զուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու դեպքում դրանց կատարման ժամանակացույցի:

2.2 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

2.3 Պայմանագրի գործողության ընթացքում հանքավայրի օգտագործման արդյունքում ընդերքօգտագործողի ստացած շահույթը նրա սեփականությունն է:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Լիազոր մարմինը իրավունք ունի՝

3.1.1 ընդերքօգտագործողից պահանջելու հանքավայրը, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտը շահագործել ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ընդունված ստանդարտներին, նորմերին ու կանոններին համապատասխան.

3.1.2 գրավոր զգուշացնելու և վաղաժամկետ լուծելու պայմանագիրն օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն.

3.1.3 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

3.1.4 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

3.1.5 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

3.1.6 պահանջելու ընդերքօգտագործողից օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզում և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ և համալիր օգտագործում կամ դրանց պահեստավորումն ու պահպանումը.

3.1.7 պահանջելու ընդերքօգտագործողից ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում հանձնել լիազոր մարմնին.

3.1.8 իրականացնելու ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ, բացառությամբ օգտակար հանածոների հայտնաբերման նպատակով, այդ մասին առնվազն 14 օր առաջ գրավոր իրազեկելով ընդերքօգտագործման իրավունք կրողին.

3.1.9 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

3.1.10 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

3.1.11 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

3.2 Լիազոր մարմինը պարտավոր է՝

3.2.1 ընդերքօգտագործողին սահմանված կարգով տրամադրել հանքավայրին վերաբերվող փաստաթղթերը.

3.2.2 գրավոր իրազեկել ընդերքօգտագործողին առնվազն 14 օր առաջ ընդերքի տրամադրված տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ կետով տրված համաձայնության մասին:

3.3 Ընդերքօգտագործողն իրավունք ունի՝

3.3.1 բացառիկ իրավունքով կատարելու երկրաբանական ուսումնասիրություն լեռնահատկացման սահմաններում, իսկ հատկացված ընդերքի տեղամասում՝ օգտակար հանածոյի արդյունահանում, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում, եթե նման գործունեություն նախատեսվում է.

3.3.2 մտնելու ընդերքի տեղամաս, ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեություն իրականացնելու դեպքում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտ և իրականացնելու նախագծով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված բոլոր աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման ու ուսումնասիրության և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով.

3.3.3 օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեություն իրականացնելու դեպքում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով կառուցելու անհրաժեշտ շենքեր, շինություններ, հաղորդակցության ուղիներ, տեղադրելու սարքավորումներ, փոխադրելու և հարստացնելու արդյունահանված օգտակար հանածոն և (կամ) վերամշակման ենթակա թափոնը.

3.3.4 տնօրինելու արդյունահանված օգտակար հանածոն և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացած օգտակար բաղադրիչները, եթե նման գործունեություն նախատեսվում է.

3.3.5 օրենսգրքի պահանջների պահպանմամբ՝ հանքարդյունահանման իրավունքի ընթացքում օգտագործելու սեփական գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը.

3.3.6 իրեն տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման, եթե նման գործունեություն նախատեսվում է,իրավունքի շրջանակում երկրաբանական ուսումնասիրություն և հետազոտություն իրականացնելու նպատակով քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքմամբ ներգրավելու երրորդ անձանց.

3.3.7 դիմելու լիազոր մարմին օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման, եթե նման գործունեություն նախատեսվում է, պայմանագրի պայմանները փոփոխելու նպատակով, եթե հայտնվել են էապես նոր՝ նախկինում չնախատեսված հանգամանքներ.

3.3.8 վաղաժամկետ հրաժարվելու օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման (եթե նման գործունեություն նախատեսվում է) իրավունքից՝ կատարելով պայմանագրով և օրենսգրքով նախատեսված պարտավորությունները:

3.4 Ընդերքօգտագործողը պարտավոր է՝

3.4.1 իրականացնել աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման (եթե նման գործունեություն նախատեսվում է) պայմանագրի ու նախագծի և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների պայմաններին համապատասխան.

3.4.2 կատարել լիազոր մարմնի և այլ իրավասու պետական մարմինների՝ օրենսդրության պահանջների պահպանման նպատակով տրված ցուցումները.

3.4.3 պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների պահանջները.

3.4.4 ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման (եթե նման գործունեություն նախատեսվում է) պլանի պահանջների կատարումը.

3.4.5 վարել երկրաբանական, մարկշեյդերական և այլ փաստագրություն, պահպանել դրանք ընդերքօգտագործման բոլոր ձևերի աշխատանքների ընթացքում.

3.4.6 վարել օգտակար հանածոների պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյանը.

3.4.7 ներկայացնել լիազոր մարմին օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվությունները.

3.4.8 հանձնել լիազոր մարմնին անհրաժեշտ երկրաբանական տեղեկությունը.

3.4.9 հավաքել, պահպանել և լիազոր մարմնին տրամադրել ուսումնասիրված, արդյունահանված և ընդերքում կորսված օգտակար հանածոների պաշարների, դրանց պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի մասին տվյալներ.

3.4.10 ապահովել ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների կատարման անվտանգությունը.

3.4.11 ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի ու շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

3.4.12 ապահովել բնության, պատմական և մշակույթի հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

3.4.13 ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությամբ նախատեսված պայմանները.

3.4.14 նախագծի, ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեություն իրականացնելու դեպքում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի և օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի.

3.4.15 տեղեկացնել լիազոր մարմնին օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին դրանց հայտնաբերումից հետո՝ 14 օրվա ընթացքում.

3.4.16 նոր հայտնաբերված օգտակար հանածոների արդյունահանում չիրականացնելու դեպքում իրականացնել դրա պահուստավորումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

3.4.17 ապահովել հանքի փակման ծրագրի, այդ թվում՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների իրականացումը.

3.4.18 ապահովել փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման համար նախատեսվող միջոցառումների իրականացումը.

3.4.19 ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը.

3.4.20 ոչ ուշ, քան յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ շահագործվող հանքավայրում (տեղամասում) կոնդիցիաները և պաշարները ենթարկել վերագնահատման ու ներկայացնել լիազոր մարմնի վերահաստատմանը.

3.4.21 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում իր տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում սահմանված կարգով հանձնել լիազոր մարմնին.

3.4.22 լիազոր մարմնին տեղեկացնել ընդերքօգտագործման իրավունքի իրավահաջորդության մասին՝ վերակազմակերպման գրանցման պահից 14 օրվա ընթացքում.

3.4.23 սկսել աշխատանքները սահմանված կարգով հողահատկացման իրավունքի տրամադրումից հետո.

3.4.24 թույլատրել լիազոր մարմնին մուտք գործել ընդերքի ցանկացած տեղամաս երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար՝ այդ մասին առնվազն 14 օր առաջ լիազոր մարմնի կողմից գրավոր իրազեկված լինելու դեպքում.

3.4.25 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

3.4.26 կատարել Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված բոլոր պարտականությունները:

3.4.27 ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնել կամ, ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքի առկայության դեպքում, կայքում տեղադրել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումները՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը (մետաղական օգտակար հանածոների դեպքում) և (կամ) տարեկան հաշվետվությունը՝ մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը.

3.4.28. շրջակա միջավայրի աղտոտվածության մշտադիտարկումն ավտոմատ տրամաչափարկված չափման սարքերով իրականացնելու դեպքում՝ չափման արդյունքներն իրենց էլեկտրոնային կայքում տեղադրել անմիջապես չափման ավտոմատ համակարգերից տվյալների փոխանցման միջոցով.

3.4.29. յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ վերանայել և ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող աշխատանքների ծրագիրը և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչները:

3.4.30 չվնասել լեռնահատկացմամբ ընկերությանը տրված տարածքում առկա արգելաթումբը և չխոչընդոտել տարածքում սահմանային ծառայություն իրականացնող մարմնի տեղաշարժին:

4. Զգուշացում

4.1 Լիազոր մարմինը, օրենսգրքի 30-րդ հոդվածի համաձայն, կարող է ընդերքօգտագործողին տալ զգուշացում, եթե նա՝

4.1.1 չի կատարում օրենսգրքով նախատեսված պարտավորությունները.

4.1.2 չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ պայմանագրով, նախագծով, ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները՝ բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի.

4.1.3 չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում:

4.2 Լիազոր մարմինն իրավունք չունի որոշում ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում վերացրել է նշված հիմքերը:

5. Հաշվետվություններ և տեղեկություն

5.1 Ընդերքօգտագործման իրավունք կրողը լիազոր մարմին օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված կարգերով պարտավոր է ներկայացնել հետևյալ հաշվետվությունները և տեղեկությունները՝

5.1.1 (կետն ուժը կորցրել է 27.06.24 N 994-Ն)

5.1.2 օգտակար հանածոների պաշարների տարեկան հաշվետվություն (5-ՕՀՊՀ).

5.1.3 _____:

5.2 Հաշվետվությունների ձևերի փոփոխման դեպքում լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին տեղեկացնել ընդերքօգտագործողին՝ փոփոխությունների կատարման պահից մեկ ամսյա ժամկետում:

5.3 Ընդերքօգտագործողը սահմանված վճարների վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում, կարգով և ձևով:

5.4. Ընդերքօգտագործողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին պարտավոր է ներկայացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումներ (մետաղական օգտակար հանածոների դեպքում) և (կամ) տարեկան հաշվետվություն:

6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը, գործողության ժամկետը և լուծումը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամանակահատվածում, եթե պայմանագրով սահմանված հիմքերով պայմանագիրը վաղաժամկետ չի լուծվել:

6.2 Պայմանագիրը գործում է նաև տրամադրված ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամկետի կամ ընդերքի տեղամասի սահմանված կարգով փոփոխության դեպքում: Եթե ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը երկարաձգվել է տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի պայմանների փոփոխությամբ, ապա պայմանագիրը շարունակում է գործել և կողմերի միջև կնքվում է համապատասխան համաձայնագիր՝ ժամկետի և (կամ) ընդերքօգտագործման իրավունքի պայմանների փոփոխության վերաբերյալ:

6.3 Պայմանագիրը կարող է լուծվել՝

6.3.1 լիազոր մարմնի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից պայմանագրի դրույթների խախտման դեպքում.

6.3.2 ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ՝ ընդերքօգտագործողի կողմից ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ հանդիսացող ընդերքի ամբողջ տեղամասից և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման (եթե նման գործունեություն նախատեսվում է) օբյեկտից, հրաժարվելու դեպքում դիմում ներկայացնելու և լիազոր մարմնի կողմից հրաժարման հավաստագիր տրամադրելու դեպքում.

6.3.3 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի ավարտի դեպքում:

6.4 Լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործման իրավունքը օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցվելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:

7. Պայմանագրում փոփոխություններ կատարելու հիմքերը

Օրենսդրությամբ սահմանված դեպքերում ընդերքօգտագործման իրավունքի փոփոխության (թույլտվության ժամկետի երկարաձգում, ընդերքի տեղամասի ընդլայնում, ընդերքի տեղամասի մի մասի հրաժարում, օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխություն, լեռնահատկացման ակտի փոփոխություն), ինչպես նաև կողմերի փոխադարձ համաձայնությամբ կողմերի հարաբերությունները կարգավորող և օրենսդրությանը չհակասող այլ պայմանների ներառման կամ փոփոխման դեպքերում կողմերն ընդերքօգտագործման պայմանագրում կատարում են համապատասխան փոփոխություններ:

8. Անհաղթահարելի ուժի, ինչպես նաև կողմերի գործունեության հետ չկապված դեպքեր

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

9. Վեճերի լուծումը

Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

10. Ծանուցում

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծանուցումները, հաղորդումների կատարումը համարվում է պատշաճ, եթե կատարված է գրավոր և տրված է առձեռն, կամ
ուղարկված է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով կողմի ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով, ընդ որում յուրաքանչյուր դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է փոխանցվել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:

11. Այլ դրույթներ

11.1 Սույն պայմանագրի հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը:

11.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

11.3 Պայմանագրին կցվում են հավելվածներ 5 էջից, այդ թվում՝

հավելված N 1 ֆինանսական առաջարկները և ընդերքօգտագործման վճարները 1 էջից,

հավելված N 2 հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ 1 էջից,

հավելված N3 համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ 1 էջից,

հավելված N 4 բնապահպանական կառավարման պլան 1 էջից,

հավելված N5 ընդերքօգտագործման թափոնների կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման, պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքներ 1 էջից:

12. Կողմերի գտնվելու վայրը, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Լիազոր մարմին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
(փոստային դասիչը, գտնվելու վայրը)

հեռ.010515161, ֆաքս՝ (37411) 526-365; Ֆին. նախ. գործառն. վարչ. հ/հ 900011009082
(հեռախոսահամարները, հեռագրային դասիչները, հաշվարկային հաշիվ)

Ընդերքօգտագործող՝ «ՍԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ,

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

(անունը, ազգանունը)

1/13/2025

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Signed by KHUDATYAN DAVIT 1808910274

(ստորագրությունը)

13 հունվարի 2025 թ.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

ԷԴՈՒԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

13 հունվարի 2025 թ.

Հավելված N 1
Օգտակար հանածոյի արդյունահանման
«____13_____» հունվարի 2025թ. N Պ-753
ընդերքօգտագործման պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները

NN ը/կ	Ծախսերի անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը (հազ.դրամ)
1.	Հանքի աշխատանքներ	0.05 տարի	1703.1
2.	Կապիտալ	-	110.0
3.	Գործառնական	-	250.0

2. Ընդերքօգտագործման ընթացքում վճարման ենթակա հարկերը, տուրքերը և այլ վճարները

2.1 ընդերքօգտագործողները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով և չափով բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ (այդ թվում՝ ռոյալթի).

2.2 ընդերքօգտագործման թույլտվության դիմաց ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում է տարեկան պետական տուրք՝ համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

3. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) և մշտադիտարկումների իրականացման՝ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար վճարներ.

3.1 ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարներ՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշմամբ սահմանված կարգով.

3.2 օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և վճարման կարգով.

3.3 ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած հատկացումների չափը.

3.4 օգտակար հանածոների արդյունահանման նախագծով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին:

Հավելված N 2
Օգտակար հանածոյի արդյունահանման
«13» հունվարի 2025թ. N Պ-753
ընդերքօգտագործման պայմանագրի

Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ

1. Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ՝

1.1 ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումները (վերառակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ և հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար և այլն).

1.2 փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումները (համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր և միջին բիզնեսի կազմակերպման աջակցությունևայլն).

1.3 հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմին:

NN ը/կ	Միջոցառումների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ.դրամ
1.	Արտադրական հրապարակի ապամոնտաժում, տեղափոխում	2 օր	150
2.	Նախազգուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում	3 օր	50.0
3.	Բացահանքի շահագործման ընթացքում վնասված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսը	14 ժամ	3671.35
4.	Բացահանքի տարածքի մոնիտորինգ	5 տարվա համար	308.65
5.	Աշխատուժի սոցիալական մեղմացման նպատակով աշխատողների վերառակավորում և այլ ճյուղերում աշխատանքի տեղավորում		ընդհանուր 750.0
6.	ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումները՝ վճարելով համայնքի բյուջե		ընդհանուր 650.0

Հավելված N 3
Օգտակար հանածոյի արդյունահանման
«13» հունվարի 2025թ. N Պ-753
Ընդերքօգտագործման պայմանագրի

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ

ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները

Հ/Հ	Պարտավորությունների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ. դրամ
1.	ՀՀ Արարատ մարզի Արարատ համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն այդ թվում դպրոցին կարիքների համար ֆինանսական աջակցության տրամադրում վճարելով համայնքի բյուջէ	Յուրաքանչյուր տարի	400.0

Հավելված N 4
Օգտակար հանածոյի արդյունահանման
«13» հունվարի 2025թ. N Պ-753
Ընդերքօգտագործման պայմանագրի

Բնապահպանական կառավարման պլան

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ՝

- Նավթամթերքների, դրանց մնացորդների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ),
- թափոնների անձնագրերի կազմում և ներկայացում շրջակա միջավայրի նախարարություն,
- բանեցված յուղերի զտում և կրկնակի օգտագործում,
- կենցաղային աղբի տղափոխում մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա,
- լեռնատրանսպորտային միջոցների վրա չեզոքացուցիչ սարքերի տեղադրում՝ արտանետումներն կրճատելու նպատակով,
- փոշենստեցման նպատակով հանքավայրին մոտեցող ճանապարհի ջրում, տարվա չոր և շոգ եղանակներին,
- մոտեցնող ճանապարհների խճապատում, փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,
- Արաքս գետի ափամերձ հատվածում, 20մ լայնությամբ ափապաշտպան շերտի սահմաններում թփուտների հատման բացառում,
- Կեղտաջրերի հավաքում բետոնապատ անթափանց հորում, որը պարբերաբար դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով,
- Բացահանքերի շահագործման ավարտից հետո խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում,
- նախատեսվում է իրականացնել արտադրական տարածքի կանաչապատում, որի ընթացքում օգտագործվելու է ջրահեռացման առվի հատակում կուտակված և ավազի լվացումից առաջացած օրգանական հումքով հարուստ տիղմը:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումները:

Մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 1805.0 հազ ՀՀ դրամ:

Բնապահպանական կառավարման պլանը համառոտ նախատեսված է օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի անբաժանելի մաս հանդիսացող շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն անցած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում», որը հանդիսանում է սույն հավելվածի մասը:

Հավելված N5
Օգտակար հանածոյի արդյունահանման
«13 » հունվարի 2025 թ. N Պ- 753
ընդերքօգտագործման պայմանագրի

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

Ընդերքօգտագործման թափոններ կառավարման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների չափը

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, ՀՀ դրամ
1.	Թափոնների կառավարման նպատակով	5 տարի մինչև 2028թ հոկտեմբերի 20-ը	150.0(մեկ հարյուր հիսուն հազար)